



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ

ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գաբրիելյանը, Արտակ Գևորգյանը, Կարեն Մանասերյանը, Արմեն Մարգարյանը, Գեղամ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Գլաձարի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 12 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3.44778 հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողում գտնվող կիսաչոր ծառերը հատելու և համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնելու համար թույլտվություն տալու մասին:

4. Գլաձոր համայնքին պատկանող ELAZ-BL880 մակնիշի էքսկավատորով անհատույց աշխատանքներ կատարելու և օգտագործվող դիզելային վառելանյութը նվիրաբերելու համար թույլտվություն տալու մասին:

5. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 9-ի թիվ 73 որոշման հավելվածում կատարված փոփոխություններն ի գիտություն ընդունելու մասին:

6. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Գոռ Գնելի Գևորգյանին գույքահարկի գծով արտոնություն տալու մասին:

Կողմ-6	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123/

Լսեցին.

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3.44778 ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 17-րդ կետի պահանջը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 30-ի N 246 դրական եզրակացությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3.44778 հա այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-014-0166-0090/ փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ կոմունալ օբյեկտների հողեր: